

## ՄԱՏԵՆԱԿԻՕՍԱԿԱՆ

ՅՈՎՀԱՆՆԵԼՍ ԹՈՒԻՄԱՆԵԱՆ, Բանաստեղծութիւններ:  
Թիֆլիս, 1904.

Բայց մշտ ակամայ լարերը բեկրեկ,  
Տեսուր են հնջում օրհներդը սիրոյ,  
Եւ չի երեսում ինձ սէրը երբէք  
Խրբ վառ զնզմունք երջափիկ հոգւելոյ,  
Յուզ Յովհանիսան.

Զարմանալի չէ բոլորովին, որ մեր քիչ թէ շատ տաղանդաւոր քնարերդուք մեր ազգի ընդհանուր դրութեան արտայայտիչ են ներկայանում և նրանց երգերի գլխաւոր յատկանիշներից մէկը թափանիծն է և ախրութիւնը, Յովհ. Թումանեանը, որի երկերի ժողովածուն վի քանի ամիս առաջ լցոս տեսաւ, մեր տաղանդաւոր քնարերդուներից մէկն է և ունի պյնքան բնորոշ և ինքնուրոյն զյուն, որ արժէ նրա մասին մի քանի անկեղծ խօսք ասել: Սակայն Թումանեանի ոտանաւորների մասին զրելուց առաջ չենք կարող չյայտնել մեր խորին զաւակցութիւնը, որ մինչև այսօր մեր մամուլը չի կարողանում ստեղծել զրականական բննադատութիւն և առօրեայ ընթացիկ յօդուածները պյս ճիւղից գժբաղտաբար չեն համապատասխանում միայն զիտնական զրականութեան սկզբունքներին, այլ և մեղանչում են հասարակ ճշմարտութեան դէմ, որ զրողի համար մեծ յանցանք է: Յով. Թումանեանի մասին մի երկու յօդուածներ երեացին մեր թերթերում և այդ յօդուածները ոչ թէ չեն բննում հեղինակի երգերը, չեն պարզում նրա մտքերը, արժանաւորութիւնները և թերթեինները, այլ ընդհանուր բառեր են, որոնք ի հարկէ բառեր էլ կմնան և ոչինչ նշանակութիւն չպիտի ունենան զրականութեան պատմագրի համար, բայց չցաւ ել այս մասին չի կարելի, Չենք կարող չըիտել, որ պ. Լ., որ պյնքան շատ աշխատում է և աշխատել է մեր մամուլի մէջ և ձգտում է պատմագրի

դիր և քննադատ լինելու մի վերին աստիճանի խակ և զարգացած զրադէտին անհասկանալի յօդուած տպադրեց Թումանեանի մասին։ Քաւական է յիշել, որ յօդուածաղիրը թոյլ էր տուել ասելու, որ Թումանեանը առաջ տաղանդ ունեցել է, իսկ այժմ չունի, բայց ոչ միայն ոչնչով չէ ապացուցել թէ ինչունն է եղել այդ տաղանդը, այլ և ինչպէս նա այժմ չունի կամ չէ զարգացրել։ Տաղանդը այնպէս ըան է, որ մի հատ ստանաւոք էլ կարող է ապացոյց լինել տաղանդի, ուստի և կորցնել տաղանդի մասին չի կարելի ասել։ Ռուսաց մատենագիր Գրիգորեալովը իսկապէս մի հատ «ինելքից պատուհատ» է գրել, իսկ մեր «ծիծեռնակ» երգի հեղինակը (գուցէ Դոդոսինեանը) մի հատ երգ է գրել, բայց տաղանդը մնում է տաղանդի նարելի է ասել, որ տաղանդը հանգամանքների շնորհիւ չի կարողացել լիովին արտայպուել և մշակուել, բայց տաղանդը միշտ կը մնայ տաղանդի, Այս գեռ մնեց ցաւ էլք լինի, եթէ պ. և. միայն այս տեսակ սիսալ արած լինէր, ծաւը նա է, որ գրադէտի մնուն վայելով մարդը մեր շատ արժանաւոր մի երիտասարդ բանաստեղծի մասին աննպաստ յօդուած է տպագրում Փրազներով, առանց ապացոյցների։ Հենց այս պատճառով այսպիսի յօդուածները դատապարտելի են, որովհետեւ անհիմն են և անիրաւացի, իսկ ձեռքը գրիչ վերցնող մարդը պիտի անթարդափ և անկեղծ լինի իւր գրուածներում, ապա թէ ոչ տպագրական խօսքը կորցնում է իւր նշանակութիւնը, եւ մեղաւոր է պ. և. իրեւ գրադէտ, որովհետեւ իւր յօդուածում նոյն իսկ ինքը հակասում է իրեն ասելով, որ Յ. Թումանեանը թոփէքներ ունի, բայց տաղանդ այժմ չունի։ Մենք այս տողերը ենք, որ տակալին տպագրական խօսքի արժեքը նոյն իսկ մամուլին ի պաշտօնէ ծառայող մարդիկ կարեւոր լըրջութեամբ չեն ըմբռնում, իսկ պ. և. էօի յօդուածը «Գեղունի»ի երկրորդ գրքի մէջ Յովշաննէս Յովշաննիսեանիկ Յովի. Թումանեանի մասին միանգամայն անարդար և նեղսիրտ մարդու գրածի տպաւորութիւն է գործում։ Մեր բանաստեղծը այնքան շնորհալի է և ապագայ ունեցող, որ եթէ նրա ինքնուրոյն երգերից և ոչ մէկը չլինէր՝ բաւական են նրա մի քանի թարգմանութիւնները իրը ապացոյց նրա տաղանդի։ Պուշկինից թարգմանած նրա «Օլէզի երգը», «Զրաշեղձը», «Եթէ իրաւ է»

ստանաւորները, Կալցովից—«Գեղջուկի մտորմունքը», Բայրընի «Շիլինի կալանաւորը» և Լերմոնտովի «Մծիրի», Երգը այնքան բանաստեղծորեն փոխադրած են, այնքան սահման և գեղեցիկ ոճով, որ հենց այս աշխատութիւնների համար Թումանեանը արժանի է արդար գնահատութեան և Խրախուսանքի և ոչ փոքրովի ևծրծանքի, Եթէ վիճակուած է մեզ մի օր ազգային դրականութեամբ կրթելու հայ սերունդներ՝ Թումանեանը պատուաւոր տեղ կունենայ մեր նորագոյն գրականութեան մեջ.

Բայց գառնանք հեղինակի դրուածներին: Բանաստեղծը ինքը բաժանել է իւր երկերը չորս մասի, որոնցից առաջին տեղը բռնում են երգերը, յետոյ լեզենդներ, պօէմաներ և թարգմանութիւններ:

Մեր ազգի քաշած օրերը ներշնչել են մեր եկեղու հայրերին, սրտառուչ շարականներ, մեր «Նրի Աստուած հարցն մերոց» մեր դառն օրերի արձագանքն է, որ ազօթք է դարձել, մենք պատր էլ հրատարակում ենք դեռ մեր նահատակների կենսագրութիւնները և պ. Մանանդեանի և Աճառեանի կաղմած «Հայոց նոր վկաններ» զիբքը անցեալ տարուայ մեր հրատարակութեանց լաւագոյնը և մեր սրտին մօտ գրքերից մէկն է: Պատմութիւնը մի քանի ազգերի համար, որպէս Ճակատագիրը և բազդը մասնաւոր մարդկանց համար, շատ անգամ խորթ մայր է զառնում: Այս տեսակ ազգերի իսկական քանաստեղծներն էլ իրենց հարազատ պատմութեան արտայատիչներն են, ուստի և մեր երգիչներն էլ համարեա բոլորը համակուած և տոգորուած են հասարակական և անձնական վլշտով և թափիծով: Այս այսպէս է եղել հնումը, պատկես և այսօր: Դեռ Մ. «Նալբանդեանցը իւր ժամանկութեան օրերը երգի մեջ նկատել է, որ վիշտը մտածող հայի բաժինն է, երգոր նա հենց մանկական հասակին հրաժեշտ է տալիս: Մեր նորագոյն երիտասարդ շանաստեղծները՝ բոլորը իրենց երգերում վիշտ են կրում: Յով. Թումանեանի երգերը նշյալքս խորին վշտի գրոշմ ունին: Բանաստեղծի անհատական կեանքն էլ թափիծով է պատած և նա տիտուր ու տրտում շիւարած ձգտում է գէպի մի անորոշ նպատակ,

Ելած կեանքի ամեն Ճամբից  
Կարօտներով անմեկին  
Ագահ, անվերջ ու անհանդիստ  
Թափառում է իմ հոգին,

Յովհաննէս Թումանեանը քնարերգու է, լիրիկ է բառիս

բուն նշանակութեամբ։ Քնարերգութիւնը, որ քնար խօսքի հետ կապ ունի և սկզբնական ժամանակներում քնարերգական տաղերն ու երգերը քնարի նուազման հետ զուգընթացաբար են ասուել, արտայայտում է սրտի պէսպէս զգաղմունքները, որպէս կ քնարը, լիրան։ Այսպէս քնարերգու բանաստեղծը գործ ունի զգացմունքների աշխարհի հետ և արծարծում է դիմաւարապէս սեփական հոգուց կրած զգացողութիւնները և այն բալորը, ինչ որ կեանքն է զարթեցնում նրա մէջ։ Վերև նկատեցինք, որ Թումանեանի երգերում տիրապետող զգացմունքներից վիշտը և թափիծը առաջին տեղն են բռնում։ Բանաստեղծի իդէալների և ձգտումների ու դառն իրականութեան հակասութիւնները թէ ազգային խնդիրներում և թէ հեղինակի անձնական կեանքում—ահա այն հասկանալի պատճառները, որոնք վիշտ են երգել տալիս նրան։ «Տիտուր զիշեր» երգի մէջ բանաստեղծը խոստովանում է, որ վիշտը նրա անբաժան ընկերն է։

Ասա՛, իմ վիշտ, իմ սե թափիծ  
Ա՛յ անբաժան կեանրիս ընկեր,  
Դու ո՞ր օրից կամ ո՞րտեղից  
Ի՞նչ դէպըով ես ինձ հետ ընկել։

Թէպէտ բանաստեղծը կարծես զգիտէ իւր վշտի պատճառները, բայց միւս երգերի մէջ նա շատ պարզ կերպով բացատրում է իւր թէ հասարակական զաւերի և թէ անձնական տառջանքների աղբիւրը։ Մենք արդէն վերև յեշեցինք, որ հայի պատճական կեանքում վշտի պատճառները չեն պակասել երքէք և մեր բանաստեղծը մի դառն հեգնութեամբ ակնարկում է այն երկեղյթները, որ ծնունդ են տալիս նրա հասարակական տիրութեան։

Տէր, մինչեւ երբ մեր աչքերը Քեզ մընան,  
Մեր գյուժն հասաւ չեռու, չեռու ազգերին,  
Աշխարհ լըցուեց մեր ալաղակ, մեր կական,  
Ու չի անզել մեր տանջանքը տակաւին։  
Խնջո՞ւ Աստուած, որբերն արդեօք հայրական  
Գութըդ կօրհնեն կոտորածի պյս ձորում,  
Թէ տարագիր պանդուխտները կպատմեն  
Ողորմութիւնդ օտար օտար ափերում։

«Մեր նախօրդներին» վերնագրով ոտանաւորի մէջ երգիչը աւելի որոշ է խօսում իւր հիասթափիման մասին։

Երանի էր ձեզ, զովւած երգիչներ,  
Դուք երգում էիք վաղ առաւտեան,

Երբ երազներն ապրում էին դեռ,  
Ոսկի երազներն հայի փրկութեան:

Թշուառ հայրենիքի Խորտակուած յշյսերի կսկիծները և  
մտածող հայի իդէալների Խորտակուածն է, որ արձագանք են  
գտել բանաստեղծի հոգւոյ մէջ:

Ամի, նա յօշոտուեց մեր աչքի առջև  
Եւ մեր զգայուն սրտերն իրեն հետ.

Ոսկի երազներ, միրաժի նըման,

Մեր անապատում չըբացան անչետ:

Եւ միթէ դառն իրականութիւնը և իդէալների հակա-  
սութիւնները բոլոր տալանդաւոր և մտածող բնարերգուներին  
թախծալից երգեր չեն ներշնչել: Բանաստեղծ-իդէալիստ Շիլ-  
լերի հետևեալ տողերը միթէ նշյնպէս հիասթափութեան գե-  
ղեցիկ արտայայութիւն չեւ.

Արդէն մարած են վառ կրակները,  
Դեռահաս կեանքիս լշյս ճրագները,

Խորտակուած են իմ իդէալները,

Եւ կտրատուած են սրտիս թելերը:

Իմ երազական բաղցր յշյսերը,

Եւ սիրոս լցնող իմ անշուն սէրը,

Հոգեկան կեանքը լշյս գեղեղկութիւն

Զոհուել է դառն իրականութեան:

(Շիլլեր—Ս. Թառայեանցի)

«Նախերգանք» և «Գութանի երգը» վերնադրով ոտանա-  
ւորները մօտիւներով շատ նման են Յ. Ցովչաննիսեանի  
թախծալից երգերին, որի բնարը նշյնպէս չէ կարողանում  
ուրախ հնչել:

Քեզ մօտ եմ դալիս, իմ հին տրտմութիւն,

Անհափառ դայեակ մանուկ օրերիս,

Այնժամ էլ չէիր իսկ հանգիստ տալիս:

Սլրտիս ականջին խօսելով թաքուն:

Ով, որ կանչում ես գիշեր ու ցերեկ

Հազար զաւերով, հազար ձեւերով,

Ոգեսրութեան հըլզոր թեւերով

Քեզ մօտ եմ դալիս, հայրենիք իմ հէր:

(Նախերգանքը):

Անհատական վշտի շարժառիթներ էլ քիչ չեն մեր կեան-  
քում առհասարակի իսկ հայ գրագէտի և բանաստեղծի համար  
աւելի ևս շատ են այն հանգամանքները, որոնք ուրախութեան  
տեղ չեն թողնում: Հայ բանաստեղծի անապահով և ողորմելի  
կացութիւնը, հայ հարուստի մեռելային անտարբերութիւնը

գեղի գիրը ու զիրը, հայ ինտէլիդենտի կատարեալ տգիտութիւնը մեր զրականութեան վերաբերմամբ բաւական զօրեղ փաստեր են բանաստեղծին յուսահատեցնելու համար:

«Տրտմութեան սաղմուսներից» երգում բանաստեղծը երկու խօսքով հրաշալի կերպով է նկարագրում այս վիճակը:

Հացս նախատինք եղաւ օտարի,  
Հանգիստս ճամրում հալածանքների,  
Լըսեցի ցերեկն աղաղակ ու բօժ  
Գիշերը լացի մինչև առաւու:

Եւ մի՞թէ բալոր հայ բանաստեղծների և գրագէտների հազը օտարի նախատինք չէ դառնում և միթէ աւելի զօրեղ պատճառ կարող է լինել անձնական տիրութեան:

Այսպիսով Յ. Թումանեանի առաջին գիրը համարեա ամբողջապէս տիսուր երգերից, էլէզիաներից է բաղկացած գըլ-խաւորապէս հասարակական մօտիւներով և ինդիրներով ներշընչուած: Այս երգերը սրտառուչ են և բանաստեղծական: Նշյն իսկ մի բանի սիրային երգերում էլ բանաստեղծի բնարը տըսուր է հնչուած:

Հեղինակի հայրենի բնութեան պատկերները և ժողովը դական առօրեայ կեանքը նոյնպէս մի փոքր տեղ են գտել այս երգերի մէջ, որպէս երևում է «Սարերում» և «Էին օրչնութիւն» ստանառըներից: Պէտք է ցանկանալ, որ այս տարրերը բանաստեղծի ստեղծագործութեան դիմաւոր նիւթը լինին, որովհետեւ Թումանեանի տաղանդի բոլոր նշանակութիւնը նրանումն է: Գրքի այս բաժնում կան և մի բանի հատ գեղեցիկ մանր ստանառըներ փիլիսոփայական բնաւորութիւն ունեցող: Այս տեսակից են «Ախ, ես երանի», «Երկու ամպ», «Եյ, Աստղեր» երգերը:

Գրքի երկրորդ բաժինը մեր բանաստեղծը բոլորովին սխալ կերպով անուանել է «Եղենդներ», որ բոլորովին անհասկանալի է: Հատ լայն մաքով պէտք է հասկանալ լեզենդան, որպէսզի այս բաժնում զետեղած երգերը բոլորը լեզենդա ընդունեն: Լեզենդան ծագում է ժողովրդական պատմուածքներից կրօնական բարյական բովանդակութեամբ և սկզբնական լեզենդաները առնուած էին լինում սուրբ գրքեց, Աւետարանից, սրբերի կեանքից և այլն: Յետագայում բարյախօսական և պատմական բովանդակութիւն ունեցող ժողովրդական աւանդութիւններն էլ լեզենդայի անոն կրեցին: Յով: Թումա-

նեանի լեզենդներից միմայն մէկը—«Լուսաւորչի կանթեղը» և «փարվանա» հազիւ կարելի է լեզենդա անուանելի, իսկ մնացածները բոլորը ժողովրդական բանաւոր բանաստեղծութեան արդիւնքներ են, որոնք աւելի առակի և վէպիկների բնաւորութիւն ունին:

Այս լեզենդաներից շունը ու կատուն» «անիծած հարսը» «Լուսաւորչու կանթեղը» և «փարվանա» երգերը շատ գեղեցիկ բաներ են, ծոլովրդական այս կամ այն աւանդութիւնը բանաստեղծը շատ պարզ, ժողովրդի ոգուն մօտ և գեղարուեստու րէն պատմում է, պահելով ժողովրդական ֆանտազիայի բոլոր նշանները»:

Այս առարկայի բովանդակութիւնը կատուի և շան թըշնամութեան առաջին պատճառի պատմութիւնն է. Մի օր շունը մի մորթի էր ճանկել և բերել կատուին տուելի, որ նա զտակ կարի, բայց կատուն այդ մորթին սեպհականացրել էր և այս պատճառով մինչեւ այսօր միմեանց պատահելիս շունը յետ է պահանջում իւր մորթին, իսկ կատուն փշտացնում է նրան՝ իրը թէ դեռ նոր պիտի կարի գտակը. Այս ոտանաւորի մէջ բանաստեղծը այնքան հարազատ է մնացել ժողովրդական լեզուին և ոճին և այնքան բնական կերպով է ստեղծագործել իւր երգը, որ արժէ մի քանի կտոր յիշել պյատեղ:

Երբոր շունը բերում է մորթին և ինդրում կատուին շուտով մի գտակ կարել՝ վերջինս պատասխանում է:

Աչքիս վըրայ, քեռի Քուչի,

Մի գտակ ա, հօ մի քուրք չի,

Քու թանկագին խաթեր համար

Ուրբաթ օրը համեցէք տարի

Փողի մասին աւելնորդ ա,

Մեր մէջ խօսելն էլ ամօթ ա:

Կատուն սակայն իւր խօսքը չի կատարում և երկար տանել-բերել աալուց յետոյ մինչեւ անգամ բարկանում է շան վերայ, որ նա շուտ շուտ է գալիս գտակի յետեկց, իսկ շունը պատասխանում է:

—Դէ հէր օրհնած, Էտենց ասա,

Էդ բարկանալդ էլ ընչիս ա,

Փող եմ տուել, վախարին կարի,

Թէչէ՛ ասա էզուզ արի.

Համ ասում ես, համ չես կարում,

Համ խօսում ես, վըրէս գոռում,

Համ, համ, համ, համ,

Քանի, ախարեր գընամ ու գամ:

Նուսաւորչու կանթեղ լեգինդայի մէջ բանաստեղծը  
պատշերացնում է մեր ժողովրդի այն հաւատալիքը թէ Արա-  
դած լերան կատարին երկնքից կախուած է Լուսաւորչի կան-  
թեղը և նրան կարող են տեսնել միմիպյն անմեղները և ար-  
դարները:

Երբ պատում է մութ խաւարը  
Զընաշնարչիկ մեր երկրին,  
Երբ տիրում է աչն ու վախը  
Թոյլ, կասկածու սըրտերին,  
Ով անմեղ է, լիբը սիրով  
Ու հաւատով անսասան,  
Ով նայում է վառ յշխերով  
Դէպի Հայոց ապագան,  
Նա կտեսնի այն մշտավառ  
Զահը կախուած երկնքից,  
Նսես Աստծու աչքը պայծառ  
Հըսկում է ցած երկնքից:

«Փարզանա» վերնագրով երգը իսկապէս մի գեղեցիկ ժո-  
ղովրդական վէպ է, որ շատ սիրուն կերպով և միանգամայն  
Տրաշալի լեցուով բանաստեղծը պատմում է իբրև մի ժողովր-  
դական աւանդութիւն: Փարզանայ թագաւորի դուստրը պիտի  
մարդու գնայ և սրա համար ահա եկել, հաւաքուել են կըտրիչ-  
ները Կովկասի ծեր Փարւանայ թագաւորի ապարանքի յանդի-  
ման և սպասում են մրցութեան:

Ահա աղջիկն իր նազելի  
Ու թագաւորն ալեհեր  
Հայրը ինչպէս մըռայլ մի ամպ,  
Աղջիկն անուշ մի լուսին,  
Ամպ ու լուսին իրար փարւած  
Դուրս են գալիս միասին:

Սրանից յետոյ հայրը առաջարկում է աղջկանը դիտել  
Կտրիչների մրցութեան և խնձորով զարկել նրան, որին կընտ-  
րէ իւր համար փեսացու:

Այժմ պիտի հանդէս դուրս գան,  
Պայքար մըտնեն քո առաջ,  
Մէկը իրեն ուժը ցոյց տայ,  
Միւսը շնորհըն իր բազկի,  
Որը ձարպիկ ձիարշաւը,  
Որն էլ թափը իր վազքի,  
Իսկ երբ կըսին առնի դադար,  
Յայտնի լինին քաջն ու վատ,  
Ու երբ անցնին մեր առջեկից  
Կըտրիչները պայազատ,

Ըստրիր, զարկեր ձեռքիդ Խնձորն  
Անյաղթներից անյաղթին:

Բայց Փարվանայ թագաւորի աղջիկը յայտնում է, որ նա իւր փեսացուից ոչ բաջութիւն և ոչ էլ գանձ ու ոսկի է պահանջում այլ սիրոյ անշէջ հուր և ով կրերի անշէջ հուրը՝ նա կլինի ընտրած փեսան: Եւ ա՛յա կարիչները թառան աշխարհի չորս կողմը աղջկայ խնդրած հուրը փնտուելու և մինչև այսօր էլ դեռ չեն գտել և չեն վերադարձել:

Չատ սպասեց արքայական գուստը կըտրիչներին բայց իդուր և այնքան լաց եղաւ, որ լիճ կտրեց արտասունքը ու ծածկեց բաղաքն ու ամրող և այժմ այնտեղ Փարվանայ խոր լիճն է ծփում: Այս գեղեցիկ երգը վերջանում է մի շատ սիրուն բանաստեղծական պատկերով, որ ստեղծել է ժաղովրդական ֆանտազիան:

Ասում են այն թիթեռները,  
Որ գիշերւայ խաւարում,  
Որտեղ ճըրադ, որտեղ կըրակ,  
Որտեղ լոս է հենց վառւում,  
Հաւաքւում են, շուրջը պատում,  
Մէջն են ընկնում խելագար,  
Ասում են, թէ այն փարվանայ,  
Թաշիլներն են սիրավառ:  
Ըշտագելուց թե են առել,  
Դարձել թեթև թիթեռներ,  
Ու տակաւին հուր տեսնելիս  
Մէջն են ընկնում անհամբեր.  
Զանք է անում ամեն մինը  
Ծուտով տանի, տիրանայ...  
Ու այրւում են, այրւում անվերջ  
Կտրիչները փարվանայ:

Թումանեանի լեգենդներից արդէն կարելի է գուշակել որ մեր բանաստեղծից պէտք է սպասել մի նոր բան, նրա պյու երգերը ինքնուրցին վերաբերմունքի նշան են դէպի ժողովրդական բանաստեղծութիւնը, լեզուն և ոճը, որից նա տականդաւոր կերպով օգտում է: Այստեղ բանաստեղծնը ինքը ձուլւում է ժողովրդական ստեղծագործութեան հետ և ընթերցողին ժօտեղնում է իւր երգերի միջոցաւ ժողովրդի հասկացողութիւններին և զգացմունքներին և զգալ է տալիս մեղ նրա հոգին: Նրա «շունը ու կատուն» լեգենդան նշանաւոր է նրանով, որ այստեղ թումանեանը հանդէս է հանում ժողովրդական բանաստեղծութեան լատկանից կողմերից մէկը—երգիծաբանական

տարրը, հումօրը։ Մեր բանաստեղծի պոէմաները և ապա թարգմանութիւնները ի հարկէ նրա գլխաւոր գրուածներն են։ Թումանեանը առհասարակ աւելի պոէմաներ գրելու ձիրք ունի և սրա մէջ է նրա ապագան։ Մենք մի քանի խօսքով կը գծադրենք նրա պոէմաների արժանաւորութիւնները և թերութիւնները։ Պոէմաները թուուզ շատ չեն, բայց վեց երգերից երեքը շատ գեղեցիկ են։ «Անուշը», «Սասունցի Դաւիթը» և «Պոէտն ու Մուսան» միանդամյն գեղարուեստական գեղեցիկ դոհարներ են պարունակում և մեր բանաստեղծին փառաւոր ապագայ և տեղ են գուշակում մեր նորագյն գրականութեան մէջ։ Պոէման առհասարակ գեղարուեստական գրականութեան այն ճիշդն է, ուր բանաստեղծը նկարագրում է իւր ազգի կեանքի նշանաւոր հասարակական և նրան հետաքրքրող երեսյթները և ընաւորութիւնները մանրամասնորէն և բազմակտմանի կերպով։ Մեր յիշած պոէմաններից մէկը դիւցազներգութիւն է, որի նիւթը միշտ լինում են այն պատմական նշանաւոր դէպքերը և անցքերը, որոնք ամբողջ ժողովրդի համար նշանակութիւն են ունեցել կամ այն անցքերը, որոնց մասնակցել է ժողովուրդը։ Դիւցազներգութեան մէջ պատմութիւնը շատ անդամ երևակայութեան հնարած փաստերով է քողարկուած լինում և տարեգրութիւնը, գործող անձննը և անդքերի տեղերը շփոթուած միմանց հետ, բայց ժողովրդի ոգին, իդէալները զգացմունքները, դաշափառները և բնաւորութիւնը միշտ ցոլանում է այս երկերի մէջ։ Դիւցազներգութիւն և պատմական պոէմաններ գրող բանաստեղծի տաղանդը երևում է նրանում, թէ ո՞րքան պատկերաւոր, գեղարուեստարէն կերպով նա կարողացել է հաւատարիմ մմալ իւր պատմութեան մէջ ժամանակի ոգուն և աւանդութիւններին և որքան կենդանի է լեզուն և ոճը, որքան ճիշտ է պատկերացրել ժողովրդի իդէալները և հայեազըները։ «Դաւիթ Սասունցի» դիւցազներգութեան կորիզը հանդուցեալ Գ. Եպիսկոպոս Սրուանձաւեանի հրատարակածն է՝ նըրանից յետոյ երեան եկան մի քանի վարիանտներ — պ. Աբեղեանի, Խալաթեանի և Հ. Գ. Վ. Յովսէփեանի և այլն։ Որքան կարելի է հասկանալ այս վարիանտների ընթերցանութիւնից մեր բանաստեղծը բոլորովին յաջող կերպով է ստեղծագործել իւր երկը։ Թէ հերոսների նկարագրութիւնը և թէ ժողովրդական բանաստեղծութեան յատկանեց չափականցութիւնները շնորհալի կերպով է Թումանեանը գծագրել։ Պոէմայի ի-

գէան հերոսի հայրենասիրութիւնն է, որ դրդում է նրան հերոսութեան: Մեր ազգը պետական կեանք երբէք չէ կարողացել ստեղծել բայց մի զարմանայի յատկութիւն է ցոյց տուել ազգային ինքնուրայնութիւնը պահելու Պատմական ամենահանր մօմենտներում այս ազգը միշտ առաջ է բերել հանձնարեղ ուժի և կամքի տէր մարդիկ, որոնք մարմնացրել են ժողովրդի լաւգոյն իդէալները: Բնական է, որ և եղել են ազգային դիւցազների սիրազործութիւնները յաւերժացնող երգիչներ և բանաստեղծներ և այսպէս է ճնել ժողովրդական բանաստեղծութիւնը, որ իւր մէջ ամինոփում է ազգի կրօնական, բարոյական, բաղաբական և կենսական հայեացընները: Ժողովրդի իդէալները, նիստ ու կազը, սովորութիւնները: Խսկ ժամանակակից բանաստեղծը վերաստեղծելով ժողովրդական բանաստեղծութեան նիւթերը նպաստում է աղջի ինքնազիտակցութեան զարդացմանը: «Սասունցի Դաւիթ» երգն էլ մեր պատմութիւն է, սա էլ մի տեսակ Եղիշէի պատմութիւն է, սա էլ ոչ միայն հայրենիքի պաշտպանութեան առիթով, այլ և ազգային կրօնն ու հաւատը թշնամոց ազատող հերոսի համար ստեղծուած պատմութիւն է: Երբոր Սասունի իշխան Մըհէրը մեռնում է նրա երկիրն ընկնում է օտարի լծի տակ մինչև որ նրա որդի Դաւիթը նորից կամենում է տիրապետել հայրենի լեռներին և վերաշինել Մարութայ սարի վրայ եղած աւերուած վանքը:

Էլ չեմ իջնիլ ես Մարութայ սարից  
Մինչեւ չշինեմ մեր վանքը նորից:  
Հինգ հազար բանուոր, հինգ հարիւր վարպետ,  
Վարպետ ու բանուոր եկան կանգնեցին,  
Տըրըթէկ հա թըրրիսկ, նորից շինեցին,  
Առաջուան կարգով, փառքով փառաւոր  
Բարձր Մարութայ վանքը Տիրամօր  
Ցըրուած միարանք ետ նորից եկան,  
Նորից թընդադին աղօթք, շարական,  
Ու երբ շէն արաւ հօր վանքը նորից՝  
Ցած իջաւ Դաւիթ Մարութայ սարից:

Իմանալով Դաւիթի ձեռնարկութիւնը Մըրա Մելիքը, որ տիրում էր Սասունին՝ ահազին զօրքով գալիս է Դաւիթի վրայ, բայց Դաւիթը նրան կիսում է իւր հարուածով, թէպէտ և Մելիքը սարսափից մտել է իոր հօրի մէջ և վերան բաշել էր բառասուն կաշի ու բառասուն ջաղազի բար: Դաւիթի թուրկայծակի հարուածը այնքան ուժեղ էր, որ՝

Անցաւ քառսուն զոմշի կաշին,  
Անցաւ քառսուն քարերը ցած,  
Միջից կըտրեց ժանտ հըրէշին  
Օխու գազ էլ դէնը զընաց:

Աերև նկատեցինք, որ Թումանեանը այս պոէմայի մէջ  
ապացուցել է, որ նա շնորհալի կերպով և հարազատօրէն է  
ստեղծագործել իւր նիւթը, Մենամարտութեան ժամանակ Մըս-  
րա Մելիքը հեռանում է կոռու տեղից մինչև Դիարբէքիր ու  
Էնտեղից է գալիս Դաւթի վրայ, որ զարկը ուժեղ լիսի և թէ-  
պէտ մարդիկ կարծեցին, որ երկիր քանդուեղ կամ ժամք ե-  
ղաւ, բայց հսկայ Դաւթի կենդանի մընաց, ուստի և Մըսրայ  
Մելիքը երկրորդ անգամ բշեց իւր ձին և Հալարից և մինչև  
անգամ վերջին անգամ գնաց մինչև Մըսրա հողը և այնտեղից  
եկաւ Դաւթի վրայ: Ժողովրդական քանաստեղծութեան մէջ  
յաճախ պատահող չափալանցութիւնները, կենդանի նկարա-  
գրութիւնները և համեմատութիւնները զեղեցիկ կերպով արտա-  
յայտում է մեր քանաստեղծը: Աչա թէ ի՞նչ հրաման է տալիս  
Մըսրա Մելիքը, երբոր իմանում է Սասունցի Դաւթի, յանդուզն  
մտադրութիւնը ազատելու հայրենիքը Մելիքի լծից:

—Կանչեցէք ասաւ, իմ զօրբը բոլոր,  
Հազար հազար մարդ նորելուկ մանուկ,  
Հազար հազար մարդ անքեղ, անմօրուք,  
Հազար հազար մարդ բեղը նոր ծըլած,  
Հազար հազար մարդ նոր թախտից ելած,  
Հազար հազար մարդ թուի միրուքաւոր,  
Հազար հազար մարդ սիպսակ ալեռոր,  
Հազար հազար մարդ, որ փողեր հընչեն,  
Հազար հազար մարդ, որ թըմբուկ զարկէն...  
Կանչեցէք, թող գան, հագնին դէնը, զըրաչ,  
Կըոիւ պիտ գնամ ես Դաւթի վրայ,

Սասունն աւերեմ

Հեղեղեմ բերեմ:

Այնքան շատ էր Մելիքի զօրբերը, որ Բաթմանայ գետը  
ցամաքեց զօրբի խմելուց: Այս պոէմայի մէջ որպէս և միւս ըո-  
լոր գրուածներում, հեղինակին չէ դաւաճանում գեղարուես-  
տական տակար, նրա լեզուն և ոճը բարովին համապատաս-  
խան է՝ նիւթի վսեմութեանը, պատմութիւնը պօէմային վայել  
օրյեկտիւ կերպով է առաջ զնում գեղարուեստական բնագֆան  
շնորհիւ քանաստեղծը համարեա չէ երեսում պատմութեան մէջ:  
Թումանեանի միւս պօէմաները «Անուշը», «Մարօն», «Ալ-

ոեցի Սաքօն», «Պօէտն ու Մուսան» ապացոյց են, որ բանաստեղծը ուղեղ ճանապարհի վրայ, որ նա ունի կեանքը հասկանալու և ըմբռնելու ընդունակութիւն, բայց նա բնականար գեռ լեռնոտ հայրենիքի տպաւորութիւնները և կեանքն է նկարագրում: Բացի «Պօէտն ու Մուսան», մնացած համարեա բոլոր պօէմաները Լոռու զաւափի զիւղական կեանքի նկարագրութիւններ են: Այս պօէմաների մեջ հայրենի երկրի զեղեցիկ պատկերները, սովորութիւնները, նախապաշարմունքները և տիպերը միմանց յաջորդում են: Եւ սրա մեջ է բանաստեղծի բէալական բնազդումը և տաղանդը: Ճիշտ է որ այդ պօէմաների հերոսների տիպերը ամրողացած չեն նրանց առանձնայատկութիւնների բացմակողմանի ուսումնամիտրութեամբ, որ նրանց նիւթը պռայժմ տեղական նշանակութիւն ունի, բայց որոնք ապացոյց են, որ բանաստեղծի ոյժը և ապագան պօէմաների մեջ են:

«Պօէտն ու Մուսան» բանաստեղծի տաղանդի բոլորովին նոր տարր է բաց անում մեր առաջ, Բանաստեղծը մի օր մըտածում էր թէ ո՞ւմից պարտը անի, որ կարողանայ հազի վող գտնել, երբ նրան ներկայանում է Մուսան և առաջարկում երգ հիւսել թշուառների օգտին:

Վեր կաց, բանաստեղծ, կանչում է այսպէս,  
Վեր կաց, ներշնչուի՛ր, դուրս արի հանդէս.  
Տանչում են աչա եղբարբդ թշուառ,  
Հեծում, հալածում աշխարհից աշխարհ:  
Երկինք են հասել արցունք ու արիւն  
Աչա քեզ համար ըերել եմ ալիւն:

Բայց բանաստեղծը Մուսայի երեսից այնպիսի դառն ու րեր էր քաշել, որ համբերութիւնից դուրս եկած՝ սկսում է կշտամբել նրան և ասում է թէ աւելի շնորհակալ կինէր, եթէ անիրաւ Մուսան բոլորովին տուած չլինէր նրան բանաստեղծական ձիրը:

—Ներիք է, Մուսա, երկինքը վկայ,  
Էլ համբերելու սիրտ ու տեղ չկայ,  
Այնպէս կանեմ քեզ, որ զու մոռանաս  
Արեն ու գարուն, պօէտ ու Պառնաս,  
Անիծուած լինին այն օրն ու տարին,  
Երբ գերի գառայ ես քու քընարին,  
Քեզ հետ մըտերիմ դառնալու օրից  
Զըրկուած մընացի կեանքում բոլորից:

Բնականարար օրամեջ քաղցած մնացող պօէտը ասում է,

որ աւելի լաւ կլինէր, եթէ ինքը մի վաշխառու կամ տէրտէր լինէր, որովհետև գոնէ դատապարտուած չէր լինի սովից մոռնելու:

Թող լինէի մի կեղեքող,  
Հաւարէի միշտ փող ու փող.  
Առաջ թէն «զաղան ու ցեց»  
Կդառնայի շուտով ես մեծ。  
Անեց բարերար  
Ազգի համար:  
Մեռած օրս էլ պըսակ տային  
— «Եր որբ ազգից» միակ հային.  
Թէ չէ լինել ի ծնէ գերի  
Մերկ Մուսայի ու երգերի,  
Որդեր ու կին  
Թողած բաղդին,  
Մերձաւորի ծալը ու ծանակ  
Ուժից ընկնել անժամանակ:

Թէպէտ Մուսան շատ է աշխատում պօէտին համոզելու,  
որ բանաստեղծի արուեստը աւելի վսեմ՝ է և կոչումը վեհ, որ  
նա պիտի ինչպէս արե վերեկի կուսաւորէ պայծառ և հըզօր  
և որ աշխարհի բոլոր գանձերը չարժեն պօէտի ներշնչումներին,  
բայց պօէտին կեանքը այնպիսի զօրեղ ապադոյցներ է տուել,  
որ նա չի համաձայնում Մուսայի հետ: Աերջապէս պօէտը առա-  
ջարկում է Մուսային մի ուրիշի մօտ էլ ասելու թէ բանաս-  
տեղծի բանքարը փողից լաւ է:

Այ, թէկուզ մեզ մօտ, հէնց իմ կընկանը  
Ասա՝ թէ մենակ փողը չի բանը:

Բանաստեղծը շատ լաւ գիտէ, որ անփող մարդու կնոջը  
անկարելի է համոզել, որ փողից բարձր մի ուրեց ոյժ կարող է  
լինել աշխարհում: Եէ որ բանաստեղծը լաւ գիտէ նյոնպէս  
կուսակցական կամ անձնական հաշիներով զեկավարուող լրա-  
գիրների վերաբերմունքն էլ դէպի իրան, որոց կարծիքը նյոն-  
պէս լսել է նա:

Ներշնչման համար  
Այսպէս է յարմար—  
Ով սովից մեռել՝  
Նա է լաւ զրել,  
Կարող ենք մենք էլ  
Այսպէս մտրակել  
Ու ծալը մի մի,  
Որ առաջ դիմի:

Զնայելով Մուսայի խօսառմներին՝ բանաստեղծը չի հա-  
մաձայնում հետեւ նրա խօրհուրդներին և ոչ էլ կամենում է

գնալ նրա հետ երկինք երջանիկ ոգիների երգելու կամ Ոլիմպոսի վրայ նեկտար խմելու, այլ գերադասում է թքել զուտի պսակի վրայ և հրաժարուել զբելուց:

Գըրադարանս շինում եմ կասսա  
Թըրում եմ և քեզ և բու պսակին,  
Երկրագագում եմ փողի բըսակին,  
«Փողի բըսակը, փողի բըսակը,  
Բարձրացնում է մարդու հասակը,  
Գեղեցկացնում է հըրէշ տըգեղին,  
Սըրբազործում է գարշ՝ ու աղտեղին:  
Նրա շյժն է որ դարձնում է լոկ  
Անասուններին յարդի ու խելօք:  
Կոյսին, զառամին մօտեցնում իրար,  
Զարին, վաշխառուին շինում բարերար,  
Պըճնում ձակատը լիրը աւազակի,  
Կանգնեցնում արձան անվախճան փառքի  
Նա է միշտ շարժում դատողի լեզուն,  
Նա է հասցնում աղօթքն Աստւծուն...

Այս պոէմայի մեջ նոր տարրը հեղինակի հումօրն է, երդիծաբանական հնչիւնները, որոնք Թումանեանի ստեղծագործութեան գիտաւոր նշանները չեն, բայց կեանքը և նրա բացասական երևայթները աւելի խոր ուսումնասիրելու ժամանակ բանասաեղծը կարող է այս ուղղութեամբ գեղեցիկ բաներ գըրել Գրքի երրորդ մասը բոնում են բանաստեղծի թարգմանութիւնները, որոնք միանգամայն յաջող պէտք է համարել: Մենք համեմատեցինք Պուշկինից և Լերմոնտովից թարգմանած երգերը և համոզուեցինք, որ Թումանեանը մեծ ժառայութիւն կմատուցանէր մեր գրականութեան, եթէ ձեռնարկեր աւելի մեծ երկեր փոխադրելու և կլասիքական հանճարների հետ ծանօթացնել հայ ընթերդողին: Մեր բանաստեղծի թարգմանութիւնները աղաս թարգմանութիւններ չեն, բայց միևնույն ժամանակ նա բնագրին ստրկարար հաւատարիմ մնալու համար չէ զօհում բանաստեղծական գեղեցկութիւնները: Բայց ոնի «Ծիլիօնի կալանաւորը», Պուշկինի «Օլէզի երգը», Լերմոնտովի «Մծիրի» իրենց լեզուով և թարգմանչական ներշնչմամբ բոլորովին հաւասար են բնագրի արժանաւորութիւններին և մեծ հաճայքով են կարդացում:

Ահա «Օլէզի երգի մի երկու տուն.

Խնում է ահա հըզօր Օլէզը  
Խենդ խաղարներից վրէժ առնելու,  
Նըրանդ համարձակ յարձակման համար

Գիւղերը սըրի-հըրի առնելու....

Ոչ մի վըտանգից չի վախում քու ձին,  
Տիրոջ կամքը միշտ հասկանում է դա.  
Մերթ կանգնում է չեզ նետերի տակին,  
Մերթ թոշում ուզմի գաշտերի վերայ—  
Եւ ցուրտ, և կըսի ոչինչ են դըրան  
Բայց... դա կլինի պատճառ քու մահւան:

Այս կտորները ինքնուրոյն ստեղծագործութեան կնիք են  
կրում և երեսում է, որ բանաստեղծը բնագրի ոգին ըմբռնել է:  
Խնչ խօսք, որ այն բոլոր բանաստեղծները, որոնք սիրելի են  
եղել մեր երգչին, յայտնի բարերար ազդեցութիւն են թողել  
հեղինակի միւս երգերի մէջ ևս: Բոլորովին զուր աշխատանք  
կլինի մանրամասն համեմատութիւններով ապագուցանել, որ  
բանաստեղծը իւր սիրած երգիչներից ազդուած է և երե-  
ւելի քնարերգուր նրա համար կեղարուեստի դաստիարակի դեր  
են կատարել: Այս հանդամանքը միայն թումանեանի տաղանդի  
օգակն են ծառայել և նրա արժանաւորութիւններից մէկն է:  
Միրուհուն տեսնելու սաստիչ տեսչանքը և ցանկութիւնը թու-  
մանեանը արտայայտում է «Կարօտ» երգի մէջ հետևեալ  
կերպով:

Սրտիս թագուհի,  
Կարօտել եմ քեզ,  
Ափ, ինչ կլինի,  
Յանկարծ յայտնուես  
Եւ, թէկուզ իսկցն,  
Դարձեալ քբանաս,  
Խնչպէս գիշերուան  
Կարձատև երազ,  
Միայն թէ տեսնեմ  
Պատկերդ մէկ էլ  
Միայն թէ ասեմ  
Ոնց եմ կարօտել:

Միթէ նոյն կարօտը չէ Փիրդուսիին յօրինել տուել մի  
գողտրիկ և վերին աստիճանի գեղարուեստական երգ, որի մօ-  
տիւը մեր բանաստեղծը արտայայտել է վերսյիշեալ տողերում:  
Աչա թէ Փիրդուսին նոյն զգացմանքը ինչպէս է երգել, որ բե-  
րում ենք մենք այստեղ թումանեանի թարգմանչական երկերից:

Կուզէի հալւել, ձուլել իմ երգին  
Ու այս տողերում թագնըւել ծածուկ,  
Որ երբ կարդայիր մի օր, իմ անգին,  
Պարող լինէի անտես, կամացուկ,

Ամեն հընչիւնի, ամեն խօսքի մէջ

Դիպչել շուրթերիդ, համբուրել անվերջ,

Վերջաղնելով մեր համառօտ ակնարկը Յով. Թումանեանի  
մասին, հարկաւոր ենք համարում ասել, որ մենք ընդհանուր  
գծերով ենք բնորոշել հեղինակի երգերը, որովհետև դեռ յոյս  
ունենք, որ նրա տաղանդը դեռ չէ առել այն բոլորը, ինչ որ  
պէտք է սպասել ապագայում. Բանաստեղծի երգերը արժանի  
են ուշադրութեան զլիաւորապէս նրա համար, որ նրանց մէջ  
դազափար և մտածողութիւն կայ, հեղինակի զգացմունքները  
կենդանի կեանքի և հսյունի բնութեան տապաւորութիւնների  
արդիւնք են. Նա զգում է ժողովրդի ցաւն ու վիշտը և համակ-  
րութիւն է զարթեցնում գէպի աշխատաւորը, նրա թափիծը  
անկեղծ է և հասարակական, նրա մի բանի պօէմաները զիւղա-  
կան կեանքի և սովորութիւնների պարզ և կենդանի պատ-  
կերներ. Են, նրա լեզուն ճկուն է և ոտանաւորների չափերը  
բազմատեսակ են, որ շատ թեթևացնում է ընթերդանութիւնը,  
նրա թարգմանութիւնները գեղարուեստական են և ընազրի  
ոգւյն մօտ, նրա լեզուն պարզ, մարուր և բաղցրահնչիւն և  
հարուստ ժողովրդական լեզուի ձեւերով ու ռձերով:

Մի երևոյթ, որ արժանի է դիմելու պյտ բանաստեղծի  
պատկերների և արտայայտութիւնների շատ մօտիկութիւնն  
է ժողովրդական բանաստեղծական ձևերին. Յայտնի չափով  
սա և արժանաւորութիւն է և մերութիւն. Հանձարները ժողո-  
վրդական ֆանտազիայի ստեղծած պատկերներին, և համեմա-  
տութիւններին յայտնի գեղարուեստական նրբութիւն են տալիս:

Ժողովրդական հումօրը, որ ծաղրում է կեանքի բացասա-  
կան երևոյթները, նշյնպէս յատուկ է Թումանեանին և պէտք  
է զանկանալ, որ «Պօէտն ու Մուսայի», «Անուշի», «Լուսեցի  
Սարօյի» և «Մարօյի» տեսակ պօէմաները աւելի մեծ տեղ  
բռնեն բանաստեղծի ստեղծագործութեան մէջ, որովհետև կեն-  
դանի կեանքը և միմիայն կեանքի ճշգրիտ և գեղարուեստա-  
կան պատկերացումը պիտի լինի և ամեն մի բանաստեղծի ի-  
դեալը, իսկ այս տեսակէտից Թումանեանը տաղանդաւոր բանաս-  
տեղծ է և արժանի երախուսանքի և արդար գնահատութեան:

2ի կարելի չնկատել, որ զբքի գինը երեք բուրյի թանգ  
է և ցանկալի է, որ մեր բանաստեղծի «Անուշը», «Սասունդի  
Դաւիթը», «Հունը ու կատուն» և միւս պօէմաները էժանազին  
զբքով հրատարակուին ժողովրդի համար:

ԳԱՐ. ԵՆԳԻՒՐԱՐԵՍԱՆ